ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

Ընդունված է 2014 թվականի նոյեմբերի 20-ին

~~**Հոդված 29. Պետական գույքի վարձակալությունը**~~

~~1. Պետական գույքը վարձակալության է տրամադրվում հետևյալ եղանակներով.~~

~~1) հրապարակային սակարկություններով (մրցույթ կամ աճուրդ (նաև էլեկտրոնային).~~

~~2) ուղղակի եղանակով:~~

~~2. Պետական գույքի վարձակալության տրամադրման կարգը և վարձավճարների հաշվարկման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:~~

~~3. Պետական գույքը հիմնադրամներին վարձակալության հանձնելիս հաշվարկված վարձակալության վճարները՝ որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճարներ, կարող են թողնվել հիմնադրամների տնօրինությանը, եթե վերջիններս համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչներին:~~

~~4. Պետական գույքը հիմնադրամներին վարձակալության հանձնելիս հաշվարկված վարձակալության վճարները՝ որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճարներ, հիմնադրամների տնօրինությանը թողնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

Հոդված 29. Պետական գույքի վարձակալությունը

1. Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմին, պետական կառավարման համակարգի մարմիններին, Համայնքներին, Հայաստանի Հանրապետության մարզպետերի աշխատակազմերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեին, Հայաստանի

Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների, պետական ոչ առևտրային կազմակերպություններից վերակազմակերպված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամների կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամներին գույքը ձևավորվում է Կառավարության սահմանված կարգով վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքից:

2. Պետական գույքի վարձակալության տրամադրման կարգը և վարձավճարների հաշվարկման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով պետական գույքը վարձակալությամբ կարող է տրամադրվել՝

1) Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմին, պետական կառավարման համակարգի մարմիններին, Համայնքներին, Հայաստանի Հանրապետության մարզպետերի աշխատակազմերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին,

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին.

2) պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին.

3) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին.

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց:

4. Պետական գույքը վարձակալության է տրամադրվում հետևյալ եղանակներով.

1) հրապարակային սակարկություններով (մրցույթ կամ աճուրդ (նաև էլեկտրոնային).

2) ուղղակի եղանակով:

Հոդված 30. Պետական գույքի անհատույց օգտագործման իրավունքը

1. Պետական գույքի անհատույց օգտագործման իրավունքը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով պետական գույքն անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել՝

1) համայնքներին.

2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց.

3) հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին (բացառությամբ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններից վերակազմակերպված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամներին կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամներին.)